ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նորք-7» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 20.11.2017թ. բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, «Նորք-7» ՍՊԸ-ն և «Էլաամոդա» ՍՊԸ-ն (կոնսորցիում), «Դեագա» ՍՊԸ-ն և «Էրիզ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Նորք-7» ՍՊԸ և «Էլաամոդա» ՍՊԸ	«Ֆոտոն» ՍՊԸ	«Դեագա» ՍՊԸ	«Էրիզ» ՍՊԸ
1	Սննդի փաթեթ	215,843,364,0	206,241,048,0	224,376,000.0	224,610,696.0

«Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 10.11.2017թ. տրված թիվ 189 վճարման հանձնարարականը, որի գումարը կազմում է 13 000 000 ՀՀ դրամ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 206 241 048.0 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ-ին:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված

հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«Ֆոտոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 206 241 048.0 ՀՀ դրամ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 10.11.2017թ. տրված թիվ 189 վճարման հանձնարարականը, որի գումարը կազմում է 13 000 000 ՀՀ դրամ:

Այսպիսով «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած ընդհանուր գինը կազմել է 206 241 084 ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է լինի 10 312 052.4 ՀՀ դրամ (206 241 084*5=10 312 052.4): Միևնույն ժամանակ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ներկայացնելով հայտի ապահովում՝ կանխիկ փողի ձևով, որպես հայտի ապահովման գումար նշել է 13,000,000 ՀՀ դրամ, ինչի չափը ոչ թե հավասար է, այլ գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը վերը նշված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելել գնման ընթացակարգի մասով կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին 1-ին տեղ գբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

«Նորք-7» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.11.2017թ. ժամը 11:10-ի և 15.12.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«Ֆոտոն» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ Խորհրդի 30.11.2017թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2017/45 բողոքով ներգարվվել է որպես երրորդ կողմ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) Խորհրդին ուղղված 30.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ Կազմակերպությունը «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Քանի որ գնման առարկան գերազանցել է 70 միլիոն ՀՀ դրամը, Պատվիրատուն հրավերով սահմանել է, որ հայտի ապահովումը պետք է ներկայացվի բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի տեսքով, որը պետք է փոխանցվի ՀՀ կենտրոնական գանձապետարանի 900008000486 հաշվեհամարին:

Կազմակերպությունը հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ գումարի տեսքով: «Ֆոտոն» ՍՊԸ-ն, որպես հայտի ապահովում, կանխիկ գումարի տեսքով փոխանցել է պահանջվող 5 տոկոսից ավել գումար հետևյալ հիմնավորումով.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն տարիներ շարունակ մասնակցել է տվյալ գնման առարկայի համար հայտարարված ընթացակարգերին, ուստի մրցակիցների համար պարզ է եղել, որ այս անգամ ևս Կազմակերպությունը հանդիսանալու է պոտենցիալ մասնակից և քաջատեղյակ են եղել «Ֆոտոն» ՍՊԸ-ին սպասարկող բանկի մասին: Եվ քանի որ գնման առարկան բաղկացած էր 1 չափաբաժնից, ապա առաջարկվող գնի ուղիղ հինգ տոկոսի չափով հայտի ապահովում փոխանցելու դեպքում, ներկայիս բարձր տեխնոլոգիաներով աշխատող բանկի պայմաններում, Կազմակերպության մրցակիցների համար դժվար չէր լինի ստանալ ինֆորմացիայի արտահոսք փոխանցված գումարի չափի մասին և հաշվարկել Կազմակերպության առաջարկած գինը: Ասել է թե առաջարկվող գնի ուղիղ հինգ տոկոսը փոխանցելու պարագայում կարող էր ի չիք դառնալ գնային առաջարկի գաղտնիությունը: Հենց այս պատճառով, տակտիկական նկատառումներով, Կազմակերպությունը փոխանցել է ավելին, քան պահանջվող հինգ տոկոսն է:

Տեղեկանալով, որ «Նորք-7» ՍՊԸ-ն, Կազմակերպության համոզմամբ անհիմն բողոք է ներկայացրել, պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և ստացել պատասխան (կցվել է):

«Ֆոտոն» ՍՊԸ-ի և 2-րդ տեղ զբաղեցրած «Նորք-7» և «Էլաամոդա» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկների տարբերությունը կազմում է շուրջ 10 միլիոն ՀՀ դրամ, ինչը նկատելի գումար է և Պատվիրատուն տնտեսված այդ գումարը կարող է ուղղել դպրոցների այլ կարիքների համար:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն նշել է նաև, որ «Նորք-7» և «Էլաամոդա» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ գնումների մասին ՀՀ օրենքով սահմանվում է, որ կոնսորցիումով հանդես գալու դեպքում հայտը պետք է ստորագրվի կոնսորցիումի բոլոր մասնակիցների կողմից, իսկ այս դեպքում հայտը էլեկտրոնային եղանակով ստորագրել է միայն «Նորք-7» ՍՊԸ-ի տնօրենը, իսկ հայտում բացակայում է «Էլաամոդա» ՍՊԸ-ի ղեկավարի կողմից տրված լիազորագիրը, որով «Էլաամոդա» ՍՊԸ-ի ղեկավարը լիազորում է կոնկրետ անձի իր փոխարեն հայտը էլեկտրոնային ձևով ստորագրելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն խնդրել է մերժել «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքը:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն 14.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ քննարկվող Ընթացակարգի շրջանակներում «Դեագա» ՍՊԸ-ն ներկայացրել է բանկային երաշխիք մեկ փաթեթի համար 570 ՀՀ դրամ հաշվարկով, սակայն ներկայացված գնային առաջարկը ընդամենը կես դրամով պակաս է եղել «Էրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկից՝ մեկ փաթեթի հաշվարկով, ուստի «Էրիզ» ՍՊԸ-ի տնօրենը համոզված է, որ իրենց պարագայում «Դեագա» ՍՊԸ-ի օգտին տեղեկատվության արտահոսք է եղել բանկից: Քանի որ սննդի փաթեթների մատակարարման նախորդ ընթացակարգերում հաղթող է ճանաչվել «Էրիզ» ՍՊԸ-ի տնօրենին պատկանող մեկ այլ կազմակերպություն, ուստի բնականաբար մրցակիցները հենց նրա առաջարկած գինը պիտի փորձեին իմանալ: Ի վերջո նախահաշվային գինը 781 ՀՀ դրամ է, նախորդ մրցույթում հաղթող է

ճանաչվել 574 ՀՀ դրամով ու արդյոք պատահական է, որ այս անգամ «Դեագա» ՍՊԸ-ն ընդամենը կես դրամով է էժան գին ներկայացրել, քան «Էրիզ» ՍՊԸ-ն:

Վերոհիշյալ գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ սույն թվականի օգոստոս ամսին Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից հայտարարվել է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով շինարարական աշխատանքների ձեռքբերման ընթացակարգ:

31.08.2017թ. կազմված թիվ 2 արձանագրությամբ մերժվել է «ՆԱՍԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հայտն՝ այն պատճառով, որ վերջինս հայտի ապահովման տուժանքի չափը ավել է նշել, քան օրենքով սահմանված 5 տոկոսը, ընդ որում՝ «ՆԱՍԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույնն է եղել:

Մերժելով վերջինիս հայտը, գնահատող հանձնաժողովը հաղթող է ճանաչել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին: ՀՀ ֆինանսների նախարարությունը, տեղեկանալով այդ մասին, դրական կարծիք չի տվել նման ձևով հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքելուն և հորդորել է պատվիրատուին պայմանագիր կնքել «ՆԱՍԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հետ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ խնդրել է «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել վերոհիշյալ նախադեպը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը Խորհրդին ուղղված 23.11.2017թ. թիվ 02/61-25525 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս հաղթող մասնակից ճանաչելով, առաջնորդվել է այն հանգամանքներով, որ մասնակիցը կատարել է հրավերով սահմանված նվազագույն պահանջները:

Պատվիրատուն միաժամանակ գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցելու հանգամանքը (սույն դեպքում մասնակցի կողմից կայացված որոշման ռիսկն է), իր հերթին չի կարող ազդել գնման գործընթացի հիմնարար սկզբունքների վրա՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համարժեք հատուցմամբ ձեռքբերմանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.11.2017թ. ժամը 11:10-ի և 15.12.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

<< դրամ

Չափաբաժին-ների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	սննդի փաթեթ	171 867 540 հարյուր յոթանասունմեկ միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն	34 373 508 Երեսունչորս միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր ութ	206 241 048 Երկու հարյուր վեց միլիոն երկու հարյուր քառաքսունմեկ հազար քառասունութ

3. Ընկերությունը ներկայացրել է հայտի ապահովում՝ կանխիկ փողի ձևով, որի չափը կազմում է 13 000 000 << դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Նորք-7» ՍՊԸ-ի 20.11.2017թ. բողոքը, Երևանի քաղաքապետարանի 23.11.2017թ. թիվ 02/61-25525 գրությունը և կից փաստաթղթերը, «Ֆոտոն» ՍՊԸ-ի 30.11.2017թ. և 14.12.2017թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդի փաթեթների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Նույն հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***206 241 048 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտի ապահովում՝ կանխիկ փողի ձևով: Ընկերությունը ներկայացրել է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից արտատպված տարբերակը, որի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը կազմում է ***13 000 000 ՀՀ դրամ:***

Այսպես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով ***առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը, որ կազմում է ***13 000 000 ՀՀ դրամ***, գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի ***(206 241 048 ՀՀ դրամ)*** հինգ տոկոսը, քանի որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***10 312 052.4 ՀՀ դրամ***, այլ ոչ թե 13 000 000 ՀՀ դրամ (206 241 048*5%=10 312 052.4): Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում ենթակա էր մերժման:

Խորհուրդը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը չի կարող գնահատվել բավարար, ուստիև նման պայմաններում Կազմակերպությունը չի կարող ճանաչվել ընտրված մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.11.2017թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և սույն որոշումից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**